Հաշվետվություն

«Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի 2021 թվականի 3-րդ

եռամսյակում իրականացված միջոցառումների

«Խոսրովի անտառ» պետական արգելոցի պահպանության, գիտական ուսումնասիրությունների կատարման ծառայություններ» ծրագրի <<Բնական էկոհամակարգերի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության պահպանություն>> բաժնի նախատեսվող միջոցառումներն ապահովման համար իրականացվել է.

Ա) «Խոսրովի անտառ» պետ. արգելոց» ՊՈԱԿ պահպանության բաժնի աշխատանքներն իրականացվում են համաձայն 2021թ. աշխատանքային ծրագրի և միջոցառումների պլանի:

Պետ. արգելոցի և պետ. արգելավայրերի ամենօրյա միջոցառումները պատշաճ իրականացնելու համար պետ. արգելոցում և պետ. արգելավայրերում իրականացվում են շուրջօրյա հերթապահություններ և շրջագայություններ: Հաշվետու ժամանակաշրջանում արձանագրվել է հրդեհի 1 դեպք: Հրդեհի բռնկման պատճառը եղել էր կայծակը, այրվել էր մոտ 1,6 հա խոտածածկ տարածք:

Տեղեկանք

հակահրդեհային ծրագրի մասին

«Խոսրովի անտառ» պետական արգելոցն ունի ԱԻՆ հետ համատեղ մշակված 2017-2022 թթ. համար հակահրդեհային պահպանության միջոցառումների ծրագիր, որն էլ հաստատվել է Արարատի մարզպետի կողմից: 2021 թվականի համար արտակարգ իրավիճակների նախարարության Փրկարար ծառայության համապատասխան տարածքային ստորաբաժանման հետ համաձայնեցվել է «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ -ի տարածքում հրդեհների արձագանքման պլանը:

բ) հարող բնակավայրերի բնակչության շրջանակներում էկոլոգիական իրազեկություն, էկոդաստիրակություն.

Հաշվետու եռամսյակում էկոդաստիարակչական, բացատրական և քարոզչական աշխատանքներ են իրականացվել Արարատի մարզի դպրոցների

հետ, որի արդյունքում շուրջ 144 աշակերտներ այցելել են պետական արգելոցի թանգարան

Պարբերաբար թարմացվում է պետական արգելոցի ֆեսբուքյան էջը ֆոտոլուսնակարներով և տեսանյութերով:

գ/ Պահաբաժիններում գարնանային և աշնանային հերթական և վերստուգիչ ստուգումների իրականացում

Պետական արգելոցում և պետական արգելավայրերում կատարած գարնանային հերթական և վերստուգիչ ստուգումների արդյունքում պետական արգելոցի տեղամասերում և «Խոր Վիրապ» և «Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրերում չեն հայտնաբերվել արգելոցային և արգելավայրային ռեժիմի խախտման դեպքեր: Աշնանային ստուգումները կիրականացվեն 4-րդ եռամսյակում և արդյունքները կներկայացվեն:

Տեղեկանք

Էկոտուրիզմի զարգացմանն ուղղված միջոցառումների

«Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ը իր կառավարման ներքո գտնվող բնության հատուկ պահպանվող տարածքներում այցելությունների թույլտվություն և զբոսաշրջային գործունեություն իրականացնում է հիմնվելով բնապահպանական սահմանափակումների, զբոսաշրջության նպատակով տարածքի օգտագործման հնարավորությունների և բնապատմական արժեքավոր տեղամասերում արգելոցային ռեժիմի պայմաններում զբոսաշրջության թույլատրելի ձևերի կազմակերպման հնարավորությունների վրա: Բոլոր աշխատանքները կատարվում են համաձայն 2021 թվականի տարեկան աշխատանքային ծրագրի:

Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում համագործակցության շրջանակներում իրականացվել են զբոսաշրջային այցեր համատեղ «Արմջեո», «Ուան ուեյ տուր», «Նուեվա վիստա», «Էլիտար թրեվլ» և մի շարք այլ կազմակերպությունների, ինչպես նաև անհատ այցելուների և ուսանողների համար: Երրորդ եռամսյակի ընթացքում «Խոսրովի անտառ» արգելոցն ընդհանուր առմամբ ունեցել է 444 այցելու:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են դաշտային այցեր արգելոցի բոլոր տեղամասերում՝ քայլարշավային արահետների ուսումնասիրման, բարեկարգման և աղբահանության աշխատանքների կազմակերպման, ինչպես նաև

բնական էկոհամակարգերի վրա զբոսաշրջության հնարավոր բացասական ազդեցությունների բացառման նպատակներով:

Տեղեկանք
Գիտական միջոցառումների

Գիտական միջոցառումների

ա) Խոշոր կաթնասուն կենդանիների հաշվառում

Գիտական բաժնի աշխատանքները կատարվել են համաձայն աշխատանքային ծրագրերի և միջոցառումների պլանի: Ուսումնասիրությունները կատարվել են պետ. արգելոցի «Խոսրով և Խաչաձոր» տեղամասերում:

Կենդանիների պոպուլացիային և միգրացիոն ուղիներին հետևելու համար պետ. արգելոցի տարածքում Բնության Համաշխարհային Հիմնադրամի /WWF/ հետ տեղադրվել են 18 հատ տեսա և ֆոտոբռնիչներ, որոնց օգնությամբ կատարվում են կենդանական աշխարհի սեզոնային միգրացիայի և հաշվառման աշխատանքները:

3-րդ եռամսյակում ֆոտոթակարդները կրկին նկարահանել են կովկասյան ընձառյուծին: Ընձառյուծն էկոհամակարգի անհրաժեշտ մասնակից է՝ պահպանելով ընձառյուծին պահպանում ենք նրա որս հանդիսացող կենդանատեսակները:

Աղյուսակ 1

Մոնիտորինգի ընթացքում հաշվառված կենդանատեսակների թվաքանակը

Հ/Հ	Կենդանիների տեսակը	Քանակը
1	Կովկասյան ընձառյուծ	1
2	Բեզոարյան այծ	118
3	Գորշ արջ	32
4	Գայլ	57
5	Լուսան	15
6	Աղվես	62
7	Նապաստակ	48
8	Անտառային կատու	2
9	Փորսուղ	48
10	Քարակզաքիս	61
11	Աքիս	25
12	Վայրի խոզ	27





բ) Որոշ տեսակների գիշատիչ թռչունների թվաքանակի և տեսակային կազմի որոշում

Գիտական բաժնի կողմից շարունակվում է որոշ տեսակի գիշատիչ թռչունների (սև անգղը, մորուքավոր անգղը, գիշանգղը, սպիտակագլուխ անգղը, տափաստանային ճուռակը, քարարծիվը, սովորական հողմավար բազեն, սապսանը) ուսումնասիրման և հաշվառման աշխատանքները:

Դիտարկումների ընթացքում արձանագրվել 1 սպիտակագլուխ անգղի և երեք սև անգղի բույններ Տափի բերդի շրջակայքում: Առաջին բույնը գտնվում է Խոսրով գետի աջ ափին՝ Թոռակ /Դորախ/ տանող ճանապարհի աջ մասում: Երկրորդ բույնը գտնվում է Սպիտակ տան շրջակայքում: 3-րդ բույնը արձանագրվել է Օդկայանի շրջակայքում:

Թռչնադիտարկում կատարելիս նկատվել է սև անգղերի ձագերի թռիչք՝ բնից ոչ հեռու: Հավազգիների ներկայացուցիչներից ուսումնասիրվել է քարակաքավը: Այս թռչնատեսակները արձանագրվել է «Խոսրով» տեղամասում փոքր երամներով:

Աղյուսակ 2

«Խոսրովի անտառ» պետական արգելոցում մոնիտորինգի ընթացքում հաշվառված թռչունների թվաքանակը

Հ/Հ	Թռչնատեսակներ	Քանակ
1	Սև անգղ	12
2	Գառանգղ	2
3	Սպիտակագլուխ անգղ	8
4	Քարակաքավ	45
5	Սև կեռնեխ	38
6	Անտառային կաչաղակ	35

գ)Սողունների որոշ տեսակների տարածվածության և դրանց քարտեզագրման աշխատանքների իրականացում

Սողունների ֆաունան արգելոցում բավական բազմազան է: Ուսումնասիրությունները կատարվել են դիտարկումների մեթոդով: Ուսումնասիրությունների ընթացքում մեր կողմից արձանագրվել է ՝կովկասյան ագաման (Laudakia caucasia), բծավոր մողեսը (Lacerta strigata), կապարագույն սահնօձը (Hemorrhois nummifer), գյուրզան (Macrovipera /Vibera/ lebetina), միջերկրածովային կրիան (Testudo graeca), երևանյան լեռնատափաստանային իժը (Pelias eriwanensis):

Ջրաճահճային և գետերի ափամերձ տեղամասերում արձանագրվել է սովորական լորտուն (*Natrix natrix*) և ջրային լորտուն *(Natrix tesselata*):

դ) Վեդի և Խոսրով գետերի որոշ ձկնատեսակների ուսումնասիրում /կարմրախայտ, քուռի բեղլու/

Գիտական բաժնի կողմից շարունակվում են ուսումնասիրվել Վեդի գետի հունի հարթավայրային մասը Եղեգնավան գյուղից մինչև պետ. արգելոց ընկած հատվածը: Վեդի գետում առկա են բազմաթիվ արհեստական եղանակով առաջացած ջրվեժներ, որոնք խոչընդոտ են հանդիսանում ձկների սեզոնային միգրացիայի համար: Մանկունք գետում շարունակվում են ծիածանափայլ իշխանի

ուսումնասիրությունները, որը նոր տեսակ է հանդիսանում պետ. արգելոցի ձկների ֆաունայում :

ե)Հավաքված բուսատեսակների (հերբարիումների) գույքագրում, տեսակային կազմի որոշում և քարտադարանի ստեղծում

Բուսաբանական բաժնում շարունակվում է հերբարիումների գույքագրման, կարման, համարակալման աշխատանքները: Մոտ 400 հերբարիումներ կարվել է համապատասխան չափսերի ստվարաթղթի վրա, պիտակավորվել և թվայնացվել:

զ) Պետական արգելոցի թանգարանի և գիտական լաբորատորիայի աշխատանքների կազմակերպում և իրականացում.

Բնության հատուկ պահպանվող տարածքների օրվան նվիրված մեկամսյա միջոցառումների շրջանակներում Վեդու ավագ դպրոցի, Գոռավան գյուղի միջնակարգ դպրոցի, Վեդի քաղաքի թիվ 2 հիմնական դպրոցի աշակերտների հետ բնապահպանական թեմաներով կազմակերպվել են սեմինար-քննարկումներ, գիտելիքների ամրապնդման նպատակով թեստային առաջադրանքներ և խաղեր, իսկ Արարատ քաղաքի թիվ 3 հիմնական դպրոցի աշակերտների հետ թռչնադիտարկում «Հայաստանի անգղերը» թեմայով:

Կատարվել է թանգարանային ցուցանմուշների ախտահանում:

Ձև 1

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021 թվականի 9 ամիսների իրականացված միջոցառումների ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ (աճողական)

<<Խոսրովի անտառ>> պետական արգելոց>> ՊՈԱԿ

(հազար դրամ)

Ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումը	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների NN	Պետության կողմից տրվող հատկացումների հաշվին ստացվող եկամուտների և իրականացվող ծախսերի			Պարզաբանումներ և բացատրություններ ծախսման նպատակի վերաբերյալ
		Հաստատված նախահաշվի ցուցանիշները	Փաստացի կատարողականը	Գերածախս կամ թերիրացում (փակագծերում գերածախս, դրական նշանով թերիրացում)	
1	2	3	4	5=3-4	6
Ա. ՄԻՋՈՑՆԵՐԻ՝ ԴԻՏԱՐԿՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՍԿԶԲԻ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴԸ		**0,0**	**0,0**	**0,0**	
Բ. ԴԻՏԱՐԿՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՍՏԱՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԸՆԴԱՄԵՆԸ (տող1+տող2+տող3) այդ թվում՝		**152887,3**	**107021,1**	**45866,2**	
1. Դրամաշնորհներ ընդամենը, որից՝		**152887,3**	**107021,1**	**45866,2**	
1.1. Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ				0,0	
1.2.Դրամաշնորհներ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից		152887,3	107021,1	45866,2	Համաձայն դրամաշնորհի պայմանագրի մնացած մուտքերը կստացվեն ըստ ժամանակացույցի
2. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ստացվող սուբսիդիաներ				**0,0**	
3. Այլ եկամուտներ, որից՝		**0,0**	**0,0**	**0,0**	
3.1. Կազմակերպության հաշվեկշռում հաշվառվող գույքի (բացառությամբ հողի) վարձակալությունից				0,0	
3.2. Կազմակերպության տնօրինմանը հանձնված հողի վարձակալությունից				0,0	
3.3.Եկամուտներ ապրանքների մատակարարումից և/կամ ծառայությունների մատուցումից ընդամենը, այդ թվում՝		**0,0**	**0,0**	**0,0**	
- ծառայությունների մատուցումից				0,0	
- ապրանքների մատակարարումից կամ իրացումից				0,0	
- այլ եկամուտներ				0,0	

1	2	3	4	5=3-4	6
Գ. ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող1+տող2)	**x**	**152887,3**	**107021,1**	**45866,2**	
Դ.ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող1+տող2+տող3)՝ այդ թվում՝	**x**	**152887,3**	**127596,4**	**25290,9**	
Դ1.Կազմակերպության աշխատողների ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ՝ ԸՆԴԱՄԵՆԸ, այդ թվում՝	**x**	**127406,1**	**107713,0**	**19693,1**	
Դ1.1 Աշխատանքի վարձատրություն	**x**	**127406,1**	**107713,0**	**19693,1**	
-Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	4111	127406,1	107713,0	19693,1	Ներառված է սեպտեմբեր ամսվա աշխատավարձի վճարումը առանց հարկերի
-Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	4112			0,0	
Դ2. Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	**x**	**0,0**	**0,0**	**0,0**	
Դ2.1. Շարունակական ծախսեր		**0,0**	**0,0**	**0,0**	
-գործառնական և բանկային ծառայությունների ծախսեր	4211			0,0	
-էներգետիկ ծառայություններ	4212			0,0	
-Կոմունալ ծառայություններ	4213			0,0	
-Կապի ծառայություններ	4214			0,0	
-Ապահովագրական ծախսեր	4215			0,0	
-Գույքի և սարքավորումների վարձակալություն	4216			0,0	
-Այլ ծախսեր	4217			0,0	
Դ2.2 Գործուղումների և շրջագայության ծախսեր	**x**	**0,0**	**0,0**	**0,0**	
-Ներքին գործուղումներ	4221			0,0	
-Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր	4222			0,0	
-Այլ (գործուղման հետ կապված) տրանսպորտային ծախսեր	4229			0,0	
Դ2.3. Պայմանագրային ծառայությունների ձեռքբերում	**x**	**0,0**	**0,0**	**0,0**	
-Վարչական ծառայություններ	4231			0,0	
-Համակարգչային ծառայություններ	4232			0,0	
-Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ	4233			0,0	
-Տեղակատվական ծառայություններ	4234			0,0	
-Կառավարչական ծառայություններ	4235			0,0	
- Կենցաղային և հանրային սննդի ծառայություններ	4236			0,0	
-Ներկայացուցչական ծախսեր	4237			0,0	
-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239			0,0	
Դ2.4. Այլ մասնագիտական ծառայությունների ձեռք բերում	**x**	**0,0**	**0,0**	**0,0**	
-Մասնագիտական ծառայություններ	4241				
Դ2.5. Ընթացիկ նորոգում և պահպանում (ծառայություններ և նյութեր)	**x**	**0,0**	**0,0**	**0,0**	
-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251			0,0	

1	2	3	4	5=3-4	6
-Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	4252			0,0	
Դ2.6. Նյութեր	**x**	**0,0**	**0,0**	**0,0**	
-Գրասենյակային նյութեր և հագուստ	4261			0,0	
-Գյուղատնտեսական ապրանքներ	4262			0,0	
-Վերապատրաստման և ուսուցման նյութեր	4263			0,0	
-Տրանսպորտային նյութեր	4264			0,0	
-Շրջակա միջավայրի պաշտպանության և գիտական նյութեր	4265			0,0	
-Առողջապահական և լաբորատոր նյութեր	4266			0,0	
-Կենցաղային և հանրային սննդի նյութեր	4267			0,0	
-Հատուկ նպատակային այլ նյութեր	4269			0,0	
Դ3. ԱՅԼ ԾԱԽՍԵՐ	**x**	**25481,2**	**19883,4**	**5597,8**	
Դ3.1 Նվիրատվություններ ոչ կառավարչական (հասարարակական) կազմակերպություններին	**x**			**0,0**	
Դ3.2 Բյուջեներ կատարվող վճարումներ	**x**	**25481,2**	**19883,4**	**5597,8**	
Դ3.2.1.Հայաստանի Հանրապետության պետական բյուջե		25481,2	19883,4	5597,8	
այդ թվում					
-Հարկեր ընդամենը, այդ թվում՝	**4822**	***25481,2***	***19883,4***	***5597,8***	
ԱԱՀ	x	25481,2	19883,4	5597,8	Ներառված չէ սեպտեմբերի ամսվա մատուցված ծառայությունների ԱԱՀ-ն
Շահութահարկ	x			0,0	
նշել ըստ տեսակների	x			0,0	
Այլ հարկեր (նշել տեսակը)	x			0,0	
-Պարտադիր վճարներ, ընդամենը, այդ թվում՝	**4823**	***0,0***	***0,0***	***0,0***	
նշել ըստ տեսակների				0,0	
նշել ըստ տեսակների				0,0	
նշել ըստ տեսակների				0,0	
Դ3.2.2.Համայնքների բյուջեներ		0,0	0,0	0,0	
-Հարկեր ընդամենը, այդ թվում՝	**4822**	***0,0***	***0,0***	***0,0***	
Գույքահարկ	x			0,0	
նշել ըստ տեսակների	x			0,0	
նշել ըստ տեսակների	x			0,0	
-Պարտադիր վճարներ, ընդամենը, այդ թվում՝	**4823**	***0,0***	***0,0***	***0,0***	
Տեխզննում	x			0,0	
նշել ըստ տեսակների	x			0,0	
նշել ըստ տեսակների	x			0,0	
Դ3.3 Դատարանների կողմից նշանակված տույժեր և տուգանքներ	**x**	**0,0**	**0,0**	**0,0**	
-Դատարանների կողմից նշանակված տույժեր և տուգանքներ	4831			0,0	
Դ3.4. ԱՅԼ ԾԱԽՍԵՐ	**4861**	**0,0**	**0,0**	**0,0**	
Հակահրդեհային Ճանապարհների վերանորոգում	x			0,0	
Ցուցանմուշների պահպանում	x			0,0	
Կենդանաբանի ծառայություն	x			0,0	
նշել ըստ տեսակների	x			0,0	
նշել ըստ տեսակների	x			0,0	
նշել ըստ տեսակների	x			0,0	
նշել ըստ տեսակների	x			0,0	

1	2	3	4	5=3-4	6
նշել ըստ տեսակների	x			0,0	
նշել ըստ տեսակների	x			0,0	
նշել ըստ տեսակների	x			0,0	
Ե. ԸՆԴԱՄԵՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՎԵԼՈՒՐԴ (ՊԱԿԱՍՈՒՐԴ) ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ (տող Գ -տող Դ)		**0,0**	**(20575,3)**	**20575,3**	
Զ. ՉՈՒՏ ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻՑ (տող Զ2 - տող Զ1)		**0,0**	**0,0**	**0,0**	
Զ1.Կապիտալ ակտիվների ձեռքբերում այդ թվում՝	**x**	**0,0**	**0,0**	**0,0**	
Զ1.1.ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	**x**	**0,0**	**0,0**	**0,0**	
-Շենքերի և շինությունների ձեռք բերում	5111			0,0	
-Շենքերի և շինությունների կառուցում	5112			0,0	
-Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113			0,0	
-Տրանսպորտային սարքավորումներ	5121			0,0	
-Վարչական սարքավորումներ	5122			0,0	
-Այլ մեքենաներ և սարքավորումներ	5129			0,0	
-Աճեցվող ակտիվներ	5131			0,0	
-Ոչ նյութական հիմնական միջոցներ	5132			0,0	
-Գեոդեզիական-քարտեզագրական ծախսեր	5133			0,0	
-Նախագծանախահաշվային աշխատանքներ	5134			0,0	
Զ1.2. ՈՉ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**x**	**0,0**	**0,0**	**0,0**	
-Հող	5411			0,0	
-Ընդերքային ակտիվներ	5421			0,0	
-Այլ բնական ծագում ունեցող ակտիվներ	5431			0,0	
-Ոչ նյութական ոչ արտադրական ակտիվներ	5441			0,0	
Զ2.Կապիտալ ակտիվների վաճառքից մուտքեր	**x**			**0,0**	
Է. ԸՆԴԱՄԵՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՎԵԼՈՒՐԴ (ՊԱԿԱՍՈՒՐԴ) (տող Ե + տող Զ)	**x**	**0,0**	**(20575,3)**	**20575,3**	

Տնօրենի ժ/պ Լեմ Խաչատրյան
(անուն,ազգանուն)

Գլխավոր հաշվապահ Բակուր Շահնազարյան
(անուն,ազգանուն)